

## ՄԵՍՐՈՌ ՊԱՏՐԻԱՐքին ԶԱՏԿՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ԱՅՑԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ

**Աւագ Ուրբաթ, 3 Մայիս 2002ին,** ընդառաջելով երուսաղէմի Հայ Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանի հրաւերին, երուսաղէմ ժամանեց Պոլսյ Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ Արք. Մութափեանը, ընկերակցութեամբ Տ. Մահակ Վրդ. Մաշալեանի եւ գաւազանակիր Տ. Տրդատ Քինյ. Ուզունեանի:

Նոր Տոմարով Ապրիլ 7ին Արեւմտեան Եկեղեցիներու կողքին Ս. Զատիկը տօնած, Մեսրոպ Պատրիարքը ուխտաւորաբար եկաւ երկրորդ անգամ տօնախմբելու Ս. Երկրի Աւագ Շարբուայ եւ Զատկուայ արարողութիւնները, որ տեղի ունեցան Սրբոց Յակոբեանց Մայր Եկեղեցւոյ եւ Սուրբ Յարութեան Տաճարին մէջ:

Օդակայանէն անմիջապէս ժամանելուն, Աւագ Ուրբաթի երեկոյեան Մեսրոպ Պատրիարքը մասնակցեցաւ Կարգ Թաղման Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:

**Աւագ Շարբաթ, Մայիս 4ին, Ս. Յակոբեանց Միաբանութիւնը նախագահութեամբ Մեսրոպ Պատրիարք Սրբազն Հօր, պաշտօնական թափօրով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, մասնակցելու աւանդական Սրբազն Լոյսի արարողութեան:**

Քրիստոսի Գերեզմանի մուտքը փակուեցաւ մեղրամումէ կնիքով, որուն կողքերը կեցած էին Հայ եւ Յոյն վարդապետներ: Երբ Ս. Գերեզմանի դռները բացուեցան, Յունաց իրենէու Պատրիարքը, Հայոց Լուսահան Տ. Մամուէլ Ռ. Վրդ. Աղոյեանի հետ միասին մտան Քրիստոսի Գերեզմանը եւ դուրս եկան որոշ իրարանցումէ մը վերջ, բերելով վառուած մոմէ ջահերը իրենց հաւատացեալներուն, նաև Ղպտի եւ Ասորի հոգեւորական ներկայացուցիչներուն:

Սրբազն Լոյսի երեւումը եւ բաշխումը ողջունուեցաւ ցնծութեամբ եւ զանգակներու դողանջով: Շուտով Տաճարը բոցավառ լուսաւորութեամբ լցուեցաւ, աւետելով աշխարհին Քրիստոսի Յարութեան խորհուրդը: Առաջնորդութեամբ Լուսահան Հայր Սուրբին՝ Ս. Յարութեան Տաճարի Հայոց Բաժնի Տեսուչին, Ս. Յակոբեանց Միաբանութիւնն ու Ժառանգաւորները, Ղպտիներն ու Ասորիները երրակի թափօր դարձան Քրիստոսի Գերեզմանի շուրջը՝ երգելով Յարութեան շարականներ: Արարողութենէն եսք, Հայոց թափօրը ընկերակցութեամբ մեծ բազմութեան վերադարձաւ Ս. Յակոբեանց Մայրավանք՝ շարունակելու Յարութեան Խորհուրդը Ճրագալոյցի Ս. Պատարգի մատուցմամբ:

**Զատկուայ Կիրակի, Մայիս 5ին,** կեսիշերէն սկսեալ Միաբանութիւնը եւ Ժառանգաւորները Ս. Յարութեան Տաճարի Հայոց Բաժնի Երկրորդ Գողգոթայի մէջ շարունակեցին Զատկական արարողութիւնները, եւ երրակի թափօր դարձան Ս. Գերեզմանի շուրջ:

Պաշտօնական Երկրորդ մուտքէն յետոյ, Լուսարարապետ Տ. Նուրիան Արք. Մանուկեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանեց Քրիստոսի Գերեզմանի վրայ, ներկայութեամբ Մեսրոպ Պատրիարք Սրբազն Հօր:

Կեսօրէ եսք, ՀԵՄ-ի հիւրընկալութեամբ Զատկուայ առիթով մատուցուած նաշէն վերջ, զոյց Պատրիարքներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ Անդաստան Վանքի Մեծ Բակին մէջ, ուր հաւաքուած էր հաւատացեալ ժողովուրդը:

**Երկուշաբթի, Մայիս 7ին,** առաւտեան Ա. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ պատարագեց եւ քարոզեց Մեսրոպ Պատրիարք Մութափեան եւ հանդիսապետեց եռադարձ քափօրին Ա. Խաչի մասունքը ի ձեռին: Յաւարտ Ա. Պատարագի, հանդիսաւոր քափօրով եւ շարականներու երգեցողութեամբ, Միարանութիւնն ու ժողովուրդը բարձրացան Պատրիարքանի Մեծ Դահլիճը, ուր՝ աշակամրոյրով ողջունեցին Սրբազն Պատրիարք Հայութը, ստանալով նշանակութեամբ:

Պաղչաթաղի մէջ, Միարանութեան հետ նաշի ընթացքին, Մեսրոպ Պատրիարք տուաւ իր հրաժեշտի պատգամը, յայտնելով գոհունակութիւնը Զատկուայ արարողութիւններուն մասնակցութեան համար: Աղօթեց Ա. Երկրի խաղաղութեան համար, մաղթելով որ Աստուած օրինէ եւ պահպանէ երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը եւ Հայ Գաղութը:

**Երեքշաբթի, Մայիս 7ին,** առաւտեան Երուսաղէմի քրիստոնեայ համայնքներու պետերը հաւաքուեցան Յունաց Պատրիարքարանը՝ փոխանցելու Զատկուայ բարեմաղթանքները, եւ այնուհետեւ եկան Հայոց Պատրիարքարանը ողջունելու Թորգում Պատրիարք Սրբազն Հօր:

Երեկոյեան, Սրբոց Յակոբեանց Մայրավանքէն Մեսրոպ Պատրիարք դէպի Պոլիս մեկնեցաւ, ընկերակցութեամբ Տ. Սահակ Վրդ. Մաշալեանի եւ գաւառակիր Տ. Տրդատ Քինյ. Ուզունեանի:

Ի. Ա.

## ԱՍՎԿԵՐՁԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Կիրակի, 2 Յունիս 2002ին, **Ժառանգաւորաց Վարժարանի** եւ Հնձայարանի Ամավերջի հանդէսը կայացաւ վարժարանի փոքր սրահին մէջ, երեկոյեան ժամը 7ին:

Բացման խօսքով ներկաներուն ողջունեց վարժարանի տեսուչ՝ Տ. Պարեւ Մ. Վրդ. Երեցեան: Հրաւիրեալ միարան հայրերու, ուսուցչական կազմի եւ հանրութեան ներկայութեան, Ժառանգաւորաց սաները կատարեցին խմբական եւ անհատական համարներ. երգ, ասմունք եւ դաշնակ: Գնահատական խօսքով հանդէս եկաւ Հայոց Լեզուի եւ Գրականութեան ուսուցիչ Տոքր. Գեորգ Բաղդիշեան: Առաջադէմ ուսանողներուն նուերներու քաշումնեն ետք, Տ. Արիս Եպս. Շիրվանեան փակման խօսքի մէջ գովեց երիտասարդ տղաքը իրենց ուսումնական աշխատասիրութեան եւ նուիրեալ ծառայութեան համար:

**Ա. Թարգմանչաց Վարժարանի Մաթեմատիկի հանդէսը տեղի ունեցաւ Զարար, 1 Յունիս,** Ժառանգաւորաց Վարժարանի հանդիսարահին մէջ: Ներկայ էին Տ. Ս. Արիս Եպս. Շիրվանեան եւ միարան հայրեր, ծնողներ եւ հետաքրքրուողներ:

Աշակերտները յաջողութեամբ ներկայացուցին տարուան ընթացքին իրենց սորված երգերը, պարերն ու արտասանութիւնները: Տեսուչ Տ. Թէոդորոս Արդ. Զաքարեան Ծաղիկ դասարանի տասը աշակերտներու յանձնեց իրենց վկայականները: